# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆԵԼ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱԿԻՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գրեր է հղել Պակիստանի Իսլամական Հանրապետության նախագահ Փերվեզ Մուշարաֆին ու Հնդկաստանի վարչապետ Մանմոհան Սինխին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի անունից իր սրտակցությունը հայտնել Քաշմիրի շրջանում շաբաթ օրը տեղի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքով զոհված բյուրավոր մարդկանց համար:

Նորին Սրբությունը ցավակցական գրերում Աստծո մխիթարությունն է հայցում զոհվածների հարազատներին ու մտերիմներին և մաղթում, որ Հնդկաստանն ու Պակիստանը արագ հաղթահարեն երկրաշարժի պատճառած վնասները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*